

ՆԱԽՈՒԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ա. Գոպանյան, իմ ուսուցիչներս՝ Սղիգար Մուրատյան, Մրապիոն Թղթյան, «Հայաստանի կոչնակ», նյու Ցորք, 1930, № 1:
2. «Բուրգաստան մանկանց»—Հավաքածու բարոյական, բրիտանիական, պատմական, աշխարհագրական և այլ պիտանի զիտելյաց պատկերագրադ ամսագիր. լույս է տեսել Կ. Պոլոստ 1882—1890 թթ., Հրատարակիչ՝ Նշան Պերպերյան, խմբագիր՝ Կ. Կարակուլյան և ապա Ա. Տյովելիստի «Բուրգաստան մանկանց» հանգեստում լույս է տեսել Ալեքսանդր Կիրոյի «Փոքրիկ Սավասցին», որի մաքրագիր օրինակը գտնվում է Չոռպանյանի արխիվում:
3. «Իմ կյանքի վեպը», «Պայրար» (Թուտոն), թերթոն № 32:
4. «Իմ ուսուցիչներս՝ տիկին Պրաճիոթի, տիկին Պլանչ Լրսիո», «Հայաստանի կոչնակ», նյու Ցորք, 1931, № 1:
5. «Հայաստանի կոչնակ», 1930, № 1:
6. Գ. Ստեփանյան, Արքագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, 1962, էջ 314—315:
7. «Իմ կյանքի վեպը», թերթոն № 32:
8. Գրուկանության և արվեստի թանգարան, Չոռպանյանի արխիվ, նամականի:
9. Նույն տեղում:
10. Մեր գրերը—«Համլետի» թարգմանությունը. «Սաղիկ» Հանդես, 1895, Պոլիս, № 1:

ՄԻ ՄՈՌԱՑԱՍԱԾ ԷԶ ՄԱՍԵՀՅԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ

Հաղորդում Վարագպատ Վարդանյանի

Պոլոստ Հրատարակված «Սուրհանդակ» թերթի աշխատակիցը 1901-ի հունիսին Փարիզում այցելել է այդ ժամանակ զիվանագիտական միսիայով Ֆրանսիայի մայրաքաղաքում զանվոր Հովհաննես Մասենյանին և նրա հետ ունեցած իր գրույցի մասին մի ակնարկ է տպագրել վերոհիշյալ թերթի 168-րդ համարում:

Այդ ակնարկը, որ մինչեւ հիմա չի հիշվել Մասենյանին նվիրված հոդվածներում և վերշերու միայն վերաշարագրված տպագրվել է «Ալիքում», ուշագրավ է նշանավոր թարգմանչի կերպարն ամրողացնելու առումով:

Նախ Մասենյանի արտաքինը ըստ «Սուրհանդակի» աշխատակիցի. «Անկենությամբ և բարությամբ լիցուն լայն զեմքի մը վրա կրացվին երկու սե, խոշոր, խելացի աշքեր: Բարձր ճակատ մը, որ իր ետքը կհովանալորեք ամեննեն փայլուն, ամեննեն զորեց ու ամեննեն արգավանդ խացություններն են կը: Իր խիստ թափ և թուխ պեխերը՝ անական, աննվաճ կամք մը ու անհողդող նկարագրի մը տպագրությունը կշեշտեն: Իր ամրող զեմքնեն կարտացողէ հմայիք ու աղնվության անդիմադրելի ճառագայթում մը:

Նկատելով, որ «Սուրհանդակի» աշխատակիցն իր այցելությանը հարցազրույցի հանդամանք է հաղորդում, թարգմանիչը շտապում է կանոնական և պահանջմանը. «Ո՞հ, ի՞նչ հարկ, ես չեմ սիրել շուրջը հանված աղմուկը»:

«Սուրհանդակի» աշխատակիցը, տեսնելով սեղանի վրա «Համլետի» հայերեն թարգ-

մանությունը, հարցնում է, թե գործերով այդքան ծանրաբեռնված, ինչպե՞ս է կարողանում ժամանակ գտնել գրականությամբ պարապելու համար:

Ահա Մասեհյանի պատասխանը.

«Ժամանակ շունիմը անկամի ու ծովյի խոսք է, ուզողը միշտ կրնա ժամանակ գտնելու նվազությունը և ժամանակը չի ժխտում, որ իրենից քիչ ժամանակ չի պահանջում արտաքին գործոց պաշտոնատան 5—6 բաժանմունքների աշխատանքների հսկումը Կենսագրական մի կետ նորություն է:

1901-ի մայիսին Մասեհյանը նշանակվել է պարսկական դեսպանատան խորհրդական թեգինստմ. Սա հայտնի էր, բայց այս ակնարկը պարզում է նաև հետեւյալը. Մասեհյանը դիմել է շահնի խնդրամբով՝ «Հավաքանց աշխատությունն հառաջ եկած ալքի հիմանովին մը հարկադրեց զիս քիչ մը ժամանակի համար արձակուրդ խնդրելու Շահի կառավարությունը արձակուրդի փոխարքեն առաջարկում է ընդունել խորհրդականի պաշտոնը և ինքն էլ համաձայնում է, նախ այս պատճառով, որ նոր պաշտոնը նմի համեմատ թեքն էր և երկրորդ՝ «Պերլինի մեջ կկարողանամ աշվճնին խնամել տալ»:

Դարձու գործից հայտնի էր, որ Մասեհյանը դասախոս է եղել Թեհրանի Քաղաքագության վարժարանաւ, իսկ որ դրա հիմնադիրն է եղել կամ հիմնադիրներից մեկը, նորություն է («Հիմնադրության գործին բոլորվին օտար կեմ»):

Մյուս նորությունն այն է, որ այս փաստաթղթով հաստատվում է մեր այն ենթադրությունը, թե Թեհրանի ազգային վարժապետների ընդհանուր տեսչության և սպային վարչության ատենապետի պաշտոնները վարել է 1884 թվականից («16 տարիի ի վեր կվարեմ»):

Հիշելով Մասեհյանի վարած պաշտոնները, աֆճ էլ ու լրիվ շափով, մարդ մնում է զարմացած, թե այդքան զբաղված մարդը ինչպես է ժամանակ գտնել և մեկը մյուսի ևսեւից թարգմանել Ենթաները:

Հայտնի էր, որ Մասեհյանը ուսումնական կայսրից պատվանշան է ստացել: Նաև ակներից հայտնի դարձավ նաև գերմանական կառավարության շնորհած պատվանշանը, բայց, որ իտալական կառավարությունը նույնապես տվել է պատվանշաններ (Սեն Մորիսի և Սեն Լազարի), նորություն է, և հայտնի է գանում այս ակնարկից, թեև ակնարկի հեղինակն ասում է, թե թերթիրը (ուստ երկութիւն՝ օտար) լոր են տպագրել այդ մասին:

Մասեհյանը զոււցի ընթացքում խոսել է նաև այն մասին, որ պարսկական կառավարությունը «նպաստ մը կանորն ամեն կարենը քաղաքներուն մեջ գտնվող հայ կրթական հաստատություններուն»: Ավելացնում է նաև հետեւյալը. «Պարսկաստանի բոլոր պաշտոնները, ասպարեզները հայերու առջև բաց են»:

Շատ կարենը է զրուցի այն մասը, որ նվիրված է պարսիկների մասին Մասեհյանի ունեցած կարծիքին: Ահա այդ կարծիքը. «Պարսիկը իբրև Արքական ցեղի շառավիղը, ուշիմ և աշխուժամիտ է: Կրթական հիմնարկությունները 4—5 տարին ի վեր տարօրինակ մղում ստացած են: Գրեթե ամեն տարի նոր դպրոցներ կրացվին: Եթե այս շարժումը շկատի, Պարսկաստանին կսպասե լավագույն, խոստումներով և հույսերով լեցուն ապազա մը: Պարսիկը իր ցեղային կոշումով պետք է օր մը անպատճառ լուսի ճամփա զտնե: Հիմա, բնականապես, մողովրդին մտքին մակարդակը բարձր չէ: Իրենց լեզուն շատ զարգացած ու բանաստեղծական է սակայն: Բանաստեղծությունները այնպես մտած, թափանցած են ծողովրդին մեջ, որ նույնիսկ աշխատավլորը, բանվորը աշխատանքն պահուն իր քթին տակին հաճախ կմում աշխատությունների, Սաատիի, Հաֆրդի, իրենց դասական

մեծ բանատողներու քերթվածքներն հասկածներ, զորս սիրապարար և երկրուղածոց ըստ բրած է»:

Զրուցի ընթացքում ապած է նաև. «Տպագրության տակ են «Մարգևա», «Օթելո» և «Փոթորիկ»:

Այս առաջած է 1901 թվականին. Սակայն հայտնի է, և հաստատապես, որ Մասեհյանը «Վէնետիկի վաճառականից» (1897) հետո բավական երկար ժամանակ, մինչև 1921 թվականը, Շեքսպիրից ոչ մի թարգմանություն չի հրապարակել: Ինչպես հասկանալի նրա նաև ապահովությունը էլ այդպիսի խոսք կա, թե տպագրության և՛մ հանձնել, բայց լուսատեսներու մասին ոչ մի տեղեկություն չկատ:

Եվս մի խնդիր, որ կարու է լուսաբանության:

ՎԱՂԱՐԺ ՎԱՂԱՐԺՅԱՆԻ ԶՐՈՒՅՑՅՈ ՀԱՄԼԵՏԻ ԱՆՁՆԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐԶԸ

Հրապարակում և առաջարան Սոֆյա Անաստայանի

Բազմաթիվ են ու բազմազան ականավոր գերասան վաղարշ վաղարշյանի կերտած կերպարներու եվ նրա հարուստ գերացանկում շեքսփերյան անձնավորումները, թեև թվով ոչ մեծ; բայց շատ կարենը տեղ են գրավում:

Սունդուկյանի անգամ թատրոնում ունեմիչոր Արշակ Բորչալյանը 1942-ին երկրորդ անգամ բեմադրեց Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը: Անդրանիկ Ներկայացումը կայացավ 1942 թ. փետրվարի 1-ին:

Համլետի գերում հանդես եկան Վ. Վաղարշյանը, ապա Գ. Զանիբեկյանը: Վաղարշյանը երկար էր պատրաստվել այդ բեմադրությանը. մանրակրիտ ուսումնասիրել էր Համլետի լավագույն անձնավորումները, ծանրթացել «Համլետի» ինչպես հայերեն, այնպես էլ ուսիսեն թարգմանություններին, շեքսպիրագիտական դրականությանը և այդ բարորից հետո մշակել էր ուրույն մի հայացը Համլետի կերպարի և ողբերգության նկատմամբ ընդհանրապես:

Այդ բեմադրությունը և մասնավորապես Համլետի գերի նրա մեկնությունը բուռն վեճների առիթ ավելց: Շատ շանցած «Կոմմունիստ» թերթում (1942, № 43) փոքրիկ հողվածով հանդես եկավ Միխայիլ Բարենչիկովը՝ զրաբաւելով և շեքսպիրագիտության մեջ նոր խոսք Համլետով բեմադրությունը: Այսուհետև «Սովետական Հայաստան» թերթի 1942 թ. մարտի 1-ի Համլետում լուր տեսավ Համլետնես Մամիկոնյանի հողվածը: Արվեստանոր շրջաններում հետաքրքրությունն ու վեճներն ավելի բորբոքվեցին: Նույն թվականի մայիսին Հայաստանի թատերական բնկերությունը լայն քննարկում կազմակերպեց:

Բեմադրության շուրջ ստեղծված հետաքրքրությունը զուրս եկավ հանրապետության սահմաններից: Օգովիելով գերասանի Մոսկվայում զանգելուց, 1943 թ. մայիսի 22-ին Համառուսական թատերական բնկերության Շեքսպիրի և արևմտյան դրամատուրգիայի կարինեալ Վ. Վաղարշյանի հրապիրեց զրույցի: Նիստը նախադառում էր հայտնի շեքսպիրագիտ պրոֆ. Մ. Մորոզովը:

* «Համլետը» ունեմիչորն առաջին անգամ բեմադրել է 1925-ին, գլխավոր դերում հանդես է եկել Հր. Ներսիսյանը: